տը տոել էր նրան երկերեսանի բնաւորութիւն, — նա միեւնոյն ժամանակ նոաճեալ ժողովուրդ էր հպատակի բոլոր համբերութեամբ, եւ միեւնոյն ժամանակ կատաղի ապստամբ էր, եթէ միջոցները կը նպաստէին նրան:

Այս էր պատճառը, որ Կարօն շատ անգամ ասում էր՝ «այս ժողովրդից կարելի է մի բան սպասել. նա բոլորովին մեռած չէ. նա մի օր կգցէ իր պարանոցեն քրդի լուծը»:

Կարօյի գուշակութիւնը անհիմն չէր: Շատախի, Սասնոյ եւ Մոկաց երկրի հայերը, որոնք իրանց կենցաղավարութեամբ չէին զանազանւում քրդերից, բոլորովին ազատ էին եւ ինքնակայ: Նրանք շատ անգամ միանալով քրդերի հետ, թալանում էին այս եւ այն երկրները. եւ զարմանալին այն է, որ չէին խնայում մինչեւ անգամ իրանց ազգայիններին: Սասնոյ հաը երբեք իր պատեանը չէ դնում մերկացրած խենջարը առանց նրան թաթախելու հակառակորդի արեան մէջ: Նա շատ դժուարութեամբ է դուրս քաշում իր սուրը, իսկ երբ սուրը մերկացաւ պատեանից, գործը վճռուած է. նա պէտք է կոտորէ:

Այս երկրում, որքան ես նկատում էի, իւրաքանչիւր հայի սիրտը նմանում էր կիսահանգած օջախի, որքան քրքրում ես մոխիրը, նոր եւ նոր կայծեր էին յայտնւում. մի փոքր վառելու նիւթ, մի բորբոք — եւ ահա բռնկեց կրակը...

Վէրքն այնքան վտանգաւոր չէ, երբ վիրաւորը զգում է նրա ցաւը. — դա կենդանութեան նշան է: Տարօնի եւ Վասպուրականի հայը իսպառ թմրած չէր, նա իր սրտի մէջ զգում էր վէրքերը, հասցրած նրան բռնութեան կոպիտ ձեռքից: Այս պատճառով նա միշտ սնուցանում էր իր սրտի մէջ վրէժխնդրութեան դառն թոյնը: Ոչ այնքան հայրենասիրութիւնը, ոչ այնքան անձնասիրութիւնը դրդում էր նրան դէպի մի այսպիսի միտք, որքան իր եկեղեցու, իր սրբութիւնների հալածանքը մահմեդական ազգերից: Հայը ամէն բանի համբերում է, ամէն թշուառութիւն տանում է, բայց նա համբերել չէ կարող, երբ բռնաբարւում է նրա եկեղեցին, նրա միակ սրբարանը: Եկեղեցին հայի կեանքի նպատակն է եւ նրա բարձրագոյն իդէալը:

Կարօն լաւ էր հասկացել հայի սրտի այս ամենազգալի կողմը, եւ նրա տեսութիւնը Բարդուղիմէոս առաքելոյ վանքի վանահօր հետ ունէր մի գաղտնի խորհուրդ, որ կապած էր իր նպատակների հետ: Ես այս չէի գիտենալ, եթէ մի դէպք առիթ չտար ինձ կիսով չափ տեղեկանալ նրա դիտաւորութեանը: